



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ԾԻԱԽՈՏԻ ԴԱՇԻՆՔ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

30 մայիսի, 2008թ.

1988թ.-ից մայիսի 31-ը նշվում է որպես Ծխախոտի դեմ պայքարի համաշխարհային օր: Հայաստանը համաշխարհային հակաժխախոտային շարժմանը պաշտոնապես միացավ 2004թ. նոյեմբերի 29-ին, անդամակցելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիային:

Անշուշտ, Հայաստանի այդ անդամակցությունն իրադարձային էր ծխախոտի դեմ պայքարի գործընթացում: Այն հիմք հանդիսացավ «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման» ՀՀ օրենքի ընդունմանը, որն իր հերթին խթանեց ծխախոտի դեմ պայքարի պետական ծրագրին, ինչպես նաև ապահովեց ծխախոտի տուփերի վրա ավելի տեսանելի և ավելի տեղեկատվական առողջապահական նախազգուշացումը:

Չնայած առկա առաջընթացին, մենք՝ «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի անդամ կազմակերպություններս, մտահոգիչ ենք համարում «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման» ՀՀ օրենքի կարևորագույն դրույթների կիրարկման ընթացքը: Այսօր, ինչպես և երեք տարի առաջ, ամենուրեք՝ աշխատավայրերում, հասարակական վայրերում, տրանսպորտում շարունակվում է ոտնահարվել ՀՀ քաղաքացիների ծխախոտի ծխից զերծ առողջ միջավայրում ապրելու և աշխատելու իրավունքը: Դրա մասին են վկայում նաև մի շարք հարցումների տվյալները:

Պատճառն ակնհայտ է. օրենքը դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ չի սահմանում այն լիազոր մարմինը, որը կիրականացնի օրենքի դրույթների կատարման վերահսկողությունը, մշակված չեն նաև համապատասխան ենթաօրենսդրական ակտեր:

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը, ի դեմս Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահական հետազոտման և զարգացումների կենտրոնի, մշակել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացրել մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են գործող օրենքի հստակեցմանը և իրավական պատասխանատվության սահմանմանը:

Մենք առաջարկում ենք, որ Օրենքով սահմանվի վերահսկող մարմինն իր լիազորություններով, ինչպես նաև Օրենքի խախտման դեպքում կիրառվող պատժի ձևը և չափը: Մեր խորին համոզմամբ, վերահսկման գործառույթը պետք է իրականացվի Առողջապահության նախարարության կողմից, մասնավորապես ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության միջոցով, որն ունի մասնաճյուղեր ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Այսպիսի մոտեցումը առավելապես կնպաստի Հայաստանում հակաժխախոտային օրենսդրության վերահսկման համակարգի կայացմանը: Օրենքն առանց վերահսկման մեխանիզմի ի գործու չէ պահպանել բնակչության առողջությունը և նպաստել ծխելու տարածվածության նվազեցմանը Հայաստանում:

Մենք՝ «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի անդամ կազմակերպություններս, կոչ ենք անում՝

1. Քաղաքացիական հասարակության մասնակցությամբ քննարկել և մշակել հակաժխախոտային օրենսդրության կիրարկման մեխանիզմների այնպիսի համակարգ, որը ոչ միայն կհայտարարագրի, այլև գործնականում կապահովի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանումը ծխախոտի ծխի բացասական ազդեցությունից:

2. Քաղաքացիական հասարակության մասնակցությամբ քննարկել և մշակել «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությունների նոր փաթեթ՝ ուղղված հակաժխախոտային օրենսդրության հետագա բարելավմանը՝ ԱՀԿ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիային համահունչ:



CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION
ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՆՈՒՅՄԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ





«Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի անդամ կազմակերպություններ՝

«Առողջապահական կրթության ասոցիացիա» ՀԿ, «Բաց բժշկական ակումբ» ՀԿ,
 «Բնապահպանական ուսումնասիրությունների կենտրոն» ՀԿ, «Գորիսի երիտասարդական
 միություն» ՀԿ, «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ, «Լեռնեցիների առողջ
 սերունդ» ՀԿ (Գորիս), «Կանանց առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ, «Հաղարծին»
 երիտասարդական ՀԿ, «Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ», «Հայկական
 բժշկական ասոցիացիա» ՀԿ, «Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա»
 (SAMSA), «Հայկական սրտաբանների ասոցիացիա» ՀԿ, «Համայնքային զարգացման և
 սոցիալական աջակցության կենտրոն» ՀԿ (Գյումրի), «Հանրային առողջության հայկական
 միավորում» ՀԿ, «Հասարակական առողջապահության հայկական ասոցիացիա» ՀԿ, «Մարդիկ
 հանուն առողջ ապրելակերպի» ՀԿ, «Մարդու առողջություն հիմնադրամ», «Մարդկային
 զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ, «Միավորված կանանց խորհուրդ «Վերելք» ՀԿ,
 «Մեդվիկ» ՀԿ (Գյումրի), «Սյունյաց տիկնայք» ՀԿ (Գորիս), «Վստահության դռներ» ՀԿ (Հրազդան)

Նարինե Մովսիսյան

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի կոորդինատոր
 Հայաստանի ամերիկյան համալսարանի առողջապահական
 ծառայությունների հետազոտման ու զարգացման կենտրոն
 Հեռ.՝ +(374 10) 51 26 17; 51 25 92

Ֆաքս՝ +(374 10) 51 25 66

Էլ. փոստ՝ nmovsesi@aua.am



CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION
 ԵՐԵՎԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԱՆ ԱՌՈՑԻԱՆԵՐԸ

